ევროკავშირი
საქართველოსთვის
ENPARD

GIPA
In hoc signo vinces

Ախալքալաքիի Երաժշտական ուսումարանը թվային գործիքներով կահավորվեց

Ախալքալաքիի երաժշտական դպրոցը տասնամյակների պատմություն ունի: Այն հարուստ ավանդույթ ունի եւ աշակերտներին դաշնամուրի, ակորդեոնի, կլառնետի եւ կիթառի վրա նվագել սովորեցնում են պրոֆեսիոնալ ուսուցիչները: Չնայած դրան, աշակերտների քանակը ամեն տարի նվազում է եւ դա երաժշտական դպրոցի աշխատակիցների անորակ աշխատանքի արդյունքը ամենեվին էլ չէր: Կարգավորված չէ դպրոցի ենթակառուցվածքը, հնացած եւ գրեթե շարքից դուրս էր եկել դպրոցի հաշվեկշռին առկա երաժշտական գործիքները:

Այսօրվա դրությամբ երեխաներին վաղ տարիքից ունեն հասանելիություն այնպիսի տեխնոլոգիաներին, ինչպիսիք են՝ համակարգիչը, սմարտֆոնը, պլանշետը եւ այլն: Նրանք այս սարքավորումները համարում են զվարճանքի աղբյուր եւ դժվար է երաժշտության ուսուցմամբ հետաքրքրել նրանց, երբ համապատասխան պայմանները չես կարող ստեղծել բարձր տեխնոլոգիական զարգացման դարաշրջանում, առաջարկում ես հնացած եւ արդեն հնչեղությունը կորցրած գործիքների վրա նվագել:

Նախագծի արդյունքում զբաղվեց՝2 տեղացի
Նախագծի ընդհանուր բյուջեն՝30,000.00 լարի
Եվրամիության ֆինանսավորումը՝ 19,500.00 լարի
Համաֆինանսավորումը՝ 10,500.00 լարի

Երկար տարիներ է ինչ, երաժշտական դպրոցի ուսուցչուհի Լուսիա Չոբանյանը պայքարում է փոխել իրավիճակը: Նպատակասլաց պայքարը ունեցավ իր արդյունքը: Երաժշտության ուսցչուհու կողմից գրված նախագիծը հավանության արժանացավ եւ Եվրամիության կողմից նոր գործիքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի 65%-ի չափով ֆինանսավորում ստացավ, իսկ մնացած 35%-ը տեղական մունիցիպալիտետը վճարեց:

«Դպրոցում հնացած ակուստիկ գործիքներ ունեինք: Նրանց հնչեղությունը արդեն բացասական ազդեցություն ուներ աշակերտների երաժշտական լսողության վրա: Նախագծի շնորհիվ, ձեռք բերեցինք թվային ռոյալ եւ դաշնամուր: Նաեւ 5 տեսակի ուրիշ գործիքներ: Դասասենյակները կահավորվեց ժամանակակից սեղաններով եւ աթոռներով, մետաղակերամիկական գրատախտակով, որը ուղիղ միանում է համացանցին եւ աշակերտին տալիս է հասանելիություն տեսական նյութերին», - ասում է Լուսիա Չոբանյանը:

MERCY CORPS

West Cork DEVELOPMENT PARTNERSHIP

ELVA

Թվային գործիքները չափսով փոքր են եւ նրանց տեղափոխությունն էլ հեշտ է եւ ունեն լավ հնչեղությունն: Սակայն դա ապացուցելը հեշտ չէր:

«Շատ արգելքների հանդիպեցինք: Չէինք կարողանում ապացուցել, որ թվային գործիքներով հնարավոր էր անցկացնել դասընթացներ եւ ստանալ որակյալ երաժշտական կրթություն: Խնդրի լուծման հարցում օգնեց Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլիի անվան պետական կոնսերվատորիան: Նրանց կողմից ուղղարկած նամակը դարձավ որոշիչ: Նամակի համաձայն, թվային երաժտական գործիքների միջոցվ հնարավոր է տիրապետել նվագելու արվեստին այնպես, ինչպես ակուստիկ գործիքով եւ կոնսերվատորիան նույնպես կիրառում է դրանք», - Ասում է տիկին Լուսիան:

Այսօրվա դրությամբ, Ախալքալաքիի երաժշտական դպրոցը միակն է Վրաստանում, որը թվային գործիքներ է կիրառում: Լուսիա Չոբանյանի համար ամենա դրական էմոցիան, աշակերտների երջանիկ դեմքերը տեսնելն էր, ովքեր չէին էլ հավատում, որ այս գործիքները իրենց դպրոցի սեփականությունն էր եւ այսուհետ այս գործիքների միջոցով կուսումասիրեին կլասիկ եւ ժամանակակից երաժշտական արվեստի բովանդակությունը եւ բնույթը:

Ախալքալաքը փոքր քաղաք է, դպրոցի հաջողության մասին ձայնը արագ տարածվեց: Դիմողների քանակն էլ ավեացավ, երաժշտական կրթություն ստանալով աստիճանաբար ավելի շատ երիտասարդ է հետաքրքրվում:

Նախաձեռնությունը ֆինանսավորվել է ,Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեւանական նախագծի՝ (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը նախագծի շրջանակներում:

Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Քորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ www.enpard.ge.